ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունիսի, 2020 թվականի N 7-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի պահանջներով և հաշվի առնելով Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունը՝ ո ր ո շ ու մ ե մ.

1. Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահի նախաձեռնությամբ 2020 թվականի հունիսի 30-ին՝ ժամը 11 :00-ին, գումարել Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի հերթական նիստ, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում գտնվող իր գործունեության վայրում:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նիստը գումարել հետևյալ օրակարգով.

    1. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության հեռուստածրագրերի՝ 2020 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցերը հաստատելու մասին հարցը:
    2. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության ռադիոծրագրերի՝ 2020 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցերը հաստատելու մասին հարցը:
    3. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության հեռուստածրագրի՝ 2020 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը հաստատելու մասին հարցը:

4. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով տարեկան ֆինանսական հաշվետվությունները հաստատելու մասին հարցը:
5. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով տարեկան ֆինանսական հաշվետվությունները հաստատելու մասին հարցը:
6. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով տարեկան ֆինանսական հաշվետվությունները հաստատելու մասին հարցը:
7. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի եկամտի աղբյուրների և ապրանքների/ծառայությունների ձեռքբերումների, եկամուտների և ծախսերի ու դրամական հոսքերի նախահաշիվների փաստացի կատարողականները հաստատելու մասին հարցը:
8. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի եկամտի աղբյուրների և ապրանքների/ծառայությունների ձեռքբերումների, եկամուտների և ծախսերի ու դրամական հոսքերի, ինչպես նաև ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման նախահաշիվների փաստացի կատարողականները հաստատելու մասին հարցը:
9. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2019 թվականի տարեկան շահութաբաժինների վճարման, տարեկան շահութաբաժինների չափը հաստատելու և ստացված զուտ շահույթի բաշխման ուղղությունները սահմանելու մասին

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

26 հունիսի, 2020 թվական

ք. Երևան